ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«02» ապրիլի 2019 թվականի N:47 ք.Գյումրի

ԼԻՊԱՐԻՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 11-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 19-ի N:42/44.2/18332-2019 գրությունը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանին 2019 թվականի մայիսի 6-ին գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա՝ «Էթիկայի հանձնաժողովի անդամներին անհրաժեշտ հմտություններ» ծրագրով նախատեսված վերապատրաստման դասընթացին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը երկու օր՝ 2019 թվականի մայիսի 6-ից 7-ը ներառյալ:
3. Լիպարիտ Մարտիրոսյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել վարչության պետի տեղակալ Արմեն Համբարձումյանին:

4. Լիպարիտ Մարտիրոսյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է